



ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 181

30 ՅՈՒՆԻՍԱՐ 1915

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ



Անոնք որ կը փափաքին Արձագանցի պակաս թիւերը լրացնել, իւրաքանչիւր թիւի համար մէյմէկ դահեկան ղրկելու են :

ԱԶԳԱՅԻՆ ՍԻՒՆՀՈՐՈՍ Կ. ՀԱՅՈՑ

Տպագրութիւնը աւարտած է և կը ծախուի 40 դահեկանի :
Գաւառներու համար փոսքայի ծախք 10 դահեկան :



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՈՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՀԱՐԱՐ-ԱԹ-ԵՐԹ

Հիմնգերարդ տարի 30 Յունուար 1915 թիւ 181

«Մերազան Քահանայապետն Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Առձագանց շաքաքերը բա-
րունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
սարել, ի բարգաւաճման կրօնից եւ ի նոգեւոր օգոս նոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար
Մերազան Հայրն սրտագին կ'օրհնէ յիշեալ Շաքաքերը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ Կարգ. Մերի տէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ. Թեոքան Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ,
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քուսմամբաւ:

ԴԵՊՔԵՐ ԵՒ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐ

ՍԻՒՆ ՀՈՒՌՍ

Ա՛յոքան անպատմելի աղէտներու մէջ
որոնք ի հիմանց սարսեցին մարդկու-
թիւնը, Ամանորը սակայն մեր հասա-
րակութեան համար կը բերէ մխիթա-
րութիւն մը, և այն՝ իսկական, միա-
յուն, բեղմնաւոր:

Սիւնհոգո՛ւն է այն:

Յամին 1911, ի Հոռոմ դումարուած
Ազգային Պատրիարքական Սիւնհոգոսը,
որուն Գործք և Վճիռք արդէն տպուած
և հրատարակուած են, ներկայ 1915

տարուան առաջին օրէն սկսաւ եկեղե-
ցական Օրինագիրքի զօրութիւնն ունե-
նալ մեր Հայ-Կաթողիկէ Հասարակու-
թեան համար, ինչպէս որ, ըստ վճռոյն
որ անոր մէջ կը բովանդակէր, թիւ 1000,
Ամեն. Պատրիարքէն հրատարակուեցաւ:

Եւ իր այս օրինական զօրութիւնը
կ'առնու այն բարձր հաստատութենէն,
զոր տուաւ անոր՝ յամին 1913, Յունիս
25ին, Կաթողիկէ Եկեղեցւոյ գերագոյն
Պետը՝ Ծայրագոյն Քահանայապետ Պիոս
Ժ., Տարածման Հաւատոյ Ս. Ժողովոյն
ձեռօք:

Ուրեմն, ունեցանք վերջապէս մեր
Օրինագիրքը:

Չէ եղած ազդ մը, որ առանց օրի-

նաց ծաղկած ըլլայ, և որչափ իմաստուն և արդար եղած են ազգի մը օրէնքները և լաւ պահպանուած, նոյնքան յառաջագէժ եղած է ան յիմնադրանքին և անստգիւտ ի բարոյականին՝ և ի քաղաքակրթութեան գերազատ:

Հինն ելլադա և հինն Հռոմ, փառաւորեալն ի պատմութեան, ապագայ ազգերու հայթայթեցին ու մատակարարեցին քաջուշիմն օրէնքներ:

Սակայն Օրէնքը, որ Աստուծոյ կ'առնու իր ծագումը, պէտք է ճառագայթէ գերբնական լուսով. ապա թէ ոչ կը խարխափի, և յաւէտ մարդկային թերութիւններով կը խարդախուի, և է՛ղի և կը մոլորեցնէ՝ փոխանակ ուղղելու: Գերիմաստ, հանճարաշատ փիլիսոփայք իսկ, ինչպէս Պլատոն ինքնին, յաճախ բանդագուշեցին ամօթալիօրէն:

Ո՛ր բղխեցաւ ոսկիի պէս զուտ օրէնք, որ մարդերը անսայթաք վարէր, և որ առաջնորդէր անոնց դէպի իրենց վերջին վախճանը: Բղխեցաւ հո՛ն ուր էր յաւիտենական ճշմարտութեան ակնադբիւրը, Բանն Աստուծոյ. նախ Հին Կտակարանի մէջ, իբրեւ առակ օրինակի հանդերձելոց, ըստ տանելոյ մարմնաւոր և խտապարանոց հրէին. և ապա՝ նոր Կտակարանին մէջ, Մարմնացեալ Բանին բերնէն բղխեցաւ՝ յաւիտենական վճիռ ջուրի մը պէս երանացուցիչ Օրէնքը Մովսէսի ձեռքով տրուեցաւ. իսկ շնորհիւ ու ճշմարտութիւն Յիսուսի Քրիստոսի ձեռքով եղան:

Եւ Ս. Եկեղեցին իր հիմնադիրէն ժառանգեց օրէնդրելու գերագոյն իւրաւունքը, որ կը բովանդակի իր ուսուցանելու. կապելու եւ արձակելու իրաւունքին մէջ:

Եւ որովհետեւ Ս. Եկեղեցւոյ Գլուխն և Վարդապետը Ս. Պետրոսն է և անոր օրինաւոր յաջորդները, ուստի հետեւաբար ընդհանուր Եկեղեցւոյ համար օրէնքներ գնելու և իրենաւաջարկուածները հաստատելու բացառական իրաւունքը կը պատկանի միայն Հռոմայ Բանայապետին՝ Քրիստոսի Փոխանորդին. և իր այս անյեղի, անկապտելի և անհակառակելի Իշխանութիւնը կը բովանդակուի Եկեղեցւոյ անաստան վէմն ըլլալու, Քրիստոսի գաղտնականներն ու ոյխարները արածելու, իր հաւատքին մէջ բնաւ ջարակելով՝ նոյն իսկ իր եղբայրները հաստատելու աստուածատուր առանձնաշնորհման, պաշտօնին և իրաւունքին մէջ:

Եւ ասոր համար է որ Քրիստոնէութեան ամէն դարերուն մէջ, Օրէնդիր Տիեզերական Ժողովներ՝ ո՛չ կրցան գուժարուիլ առանց Հռոմայ Բանայապետին, ո՛չ կրցան առանց անոր օրինաւոր սեպուիլ, և ո՛չ մասնակի Ժողովներու օրէնքները կրցան առանց Անոր տեւել անվթար:

Ո՛րքան ճշմարտութեամբ ուրեմն կ'ըսէինք թէ մեզի համար միսթարութիւն մը կը բերէ այս նոր ծարին:

Գարեբէ ի վեր Հայ ազգը կրօնք ունեցեր է, Ժողովներ ունեցեր է և վարկապարզի կանոններ՝ ենթարկուած ի հաճոյս կամապաշտ առաջնորդներու և յօտից կոխան անաստ հպատակաց. բայց չէ ունեցած բնաւ հաստատուն Օրինագիրք մը: Եւ ապա հերձուածն ու մոլորութիւն գոսացուց այդ ուռը, և քեցեց զայն ճշմարիտ Որթէն, և յամբեցուց անոր ա՛յն կենսական հիւթը՝ որով մասնաւոր եկեղեցիք կը միանան

Ընդհանրական և մի եկեղեցւոյն հետ, որուն տեսանելի Գլխը կը բազմի Հոռոմայ աթոռոյն վրայ, և Անոր միջոցաւ կը զօգին ընդ Քրիստոսի ի կենդանի միութեան, ինչպէս արբանեակներն ու մարտիրոսներն արեւու վերաբերմամբ: Ով որ կը բաժնուի աստուածային ձգողութեան այս միակ կեդրոնէն, արտակեղծոն կը թաւալի խաւարի մէջ, և անպատճառ կը փշրի բազմազէտ և իր թշուառ փշուրներն յաւիտենապէս օրինազուրկ թափառալից կը տուայտին մթութեան անհունին մէջ: Քրիստոսի թշնամի հրեաներու պէս միայն կրնան ըսել անոնք. Մեք Օրէնս ունիմք. և այն՝ Օրինոքս ո՛ր ոք աւրարանայ:

Եւ սակայն, նոյն իսկ Կաթողիկէ Հայ Հասարակութիւնս, ճշմարիտ Որթին վրայ հաստատուած կենսունակ փոքրիկ ճիւղը, հակառակ այնքան ջանքերու զոր թափեր են մեր մեծարելի Պատրիարքները, կարծես ճակատագրականօրէն չէր կրցած՝ մինչեւ հիմա ունենալ Օրինագիրք մը՝ հաստատուած Ս. Աթոռէն:

Եւ ահա՛ Աստուծոյ անքնին ու բազմագութ նախախնամութիւնը հաճեցաւ կարգադրել որ մենք ունենայինք հիմա Օրինագիրք մը, ազգային Պատրիարքական Սիւնհոգոս մը, և փառաւորապէս:

Այո՛, փառաւորապէս: Քանզի ոչ մի ուրիշ արեւելեան ազգի վիճակեցաւ քսան դարերու երկայն ժամանակամիջոցին մէջ՝ ազգային Սիւնհոգոս մը գումարել ի Մայր քաղաքացն ի Հռոմ, ի սեամի Գլխաւոր առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, ուսկից կը ճառագայթէ ամէն ճշմարտութիւն անմոլար, ուր գերազանց կը բազմի Ուսուցիչն և Դատաւորն՝ Քրիստոսի Փոխանորդը, նա՛ որ պատգամն է

Քրիստոնէութեան, նա՛ որ միայն կրնայ ըսել իր առաքելապետական Իշխանութեամբ. Հաճոյ թուեցաւ Հոգւոյն Սրբոյ եւ Մեզ: Ոչ մէկ ազգ կրցաւ այս բախտին արժանանալ, ինչպէս մենք, որ Մայրազոյն Քահանայապետին Քաղաքին մէջ իսկ Հայ Կաթողիկէ Պատրիարքին թոյլատրուի իշխանաբար նախագահել իր ազգային Սիւնհոգոսին, լիակատար իրաւասութեամբ. անմասն է այս շնորհ, զոր ըրաւ մեզ Նորին Սրբութեան զիջող և հայրասէր զթութիւնը, որով և երաշխաւորուեցաւ սինոդական հարց բացարձակ ազատութիւնը, Սիւնհոգոսին անգործութիւնն ու կարգաւորութիւնը: Եւ այս ամենուն իբր հետեւութիւն, — մինչդեռ մեր հին Պատրիարքաց նմանօրինակ բազմաթիւ ձեռնարկները ապարդիւն մնացեր էին, — ահա այս Սիւնհոգոսը վաղընդփոյթ անցաւ քննութեան բովերէն, և արագ արագ արժանացաւ Քահանայապետական բարձր և ցանկացեալ հաստատութեան և լատին և հայ բնագիրներն արդէն իսկ տպագրութեամբ ընծայուեցան ի լոյս:

Ահա թէ ինչո՛ւ ունեցանք մեր Սիւնհոգոսը փառաւորապէս:

*
* *

Սիւնհոգոսական Գործոց վրայ եթէ ուզենք ընդհանուր և շատ ընդարձակ վերլուծական ակնարկ մը նետել, կը տեսնենք թէ ան կը բովանդակէ երեք գլխաւոր մասեր.

Ա. Վաւերաթուղթերու և պատմական մասը.

Բ. Վճռոց և կարգադրութեանց մասը, այս է՝ Իրաւաբանական լեզուով,

իրաւունքի Մարմինը (Corpus Juris) .

Գ. Ընդարձակ Յաւելորած մը, որ կը պարունակէ բազմաթիւ և շատ կարեւոր յիշատակարաններ (documenta) :

Մենք հիմա զանց կ'առնունք ասոնց վրայ ո և է կերպով խօսիլ. երբ սկըսինք առանձինն տեսութիւն հրատարակել ամբողջ Հատորին բովանդակութեանը վրայ, ան ատեն բնականաբար մանրամասնօրէն պիտի լուսարանենք մէն մի մասը առանձինն :

Կը փափաքինք սակայն, Սիւնհոգոսին անհատկամտ արժէքը սակաւօք ցոյց տալու համար, անոր Բ. մասին, որ գըլխաւորն է, Վեժ գիծերը, ինչպէս կ'ըսեն, ուրուազ ծել անցողակի :

*
* *

Սիւնհոգոսը դիտած է մանաւանդ երեք կէտ. Հաւասք, Նուիրապետութիւն և քարեկարգութիւն :

ա. Հաւատքի և հաւատալեաց հիմնական սկզբունքները կը թուէ, կը բացատրէ, կ'ուսուցանէ, մարդկեղէն բանաւորութեան սահմանափակ խեղճութեանը դիմաց՝ հաւատոյ լուսասփիռ Արեգակը մատնանիշ ընելով՝ և դատապարտելով խաւարը, որ դժոխոց իշխանին չարարուեստ մեքենայութիւններով միշտ նոր ձեւեր կը զգենու և կը նիւթէ ճշմարտին դէմանպատկառ, մանաւանդ արդի անօրէն իմաստութիւնը, բողոքականութեան, որմնադրութեան և արդիականութեան բազմադիւտան վիշապները : Սիւնհոգոսը կը մասնանշէ մեզ այն աստուածաշէն Քաղաքը, զեկեղեցին, սիւն եւ հաստատութիւն ճշմարտութեան և յաղթահարիչ մոլորութեան. և սակայն եկեղեցին կը պան-

ծայ միայն իր Գլխովը. որ անսխալ կը կը բազմի ի Հռոմ : որմէ եթէ որ բաժնուած է, ի խաւարի կը շրջի, հերձեալ է և հակառակ Քրիստոսի : Ինքնին ուրիմն կը դատապարտուն ազգային անուանեալ մոլորական եկեղեցիներ :

բ. Հայ Կաթողիկէ Նուիրապետութիւնը Սիւնհոգոսի մեծ մասը կը գրաւէ, իր ամէն աստիճաններովը. ո՛չ թէ անոնց մտացածին և զեղծական իրաւանց վրայ յանօգուտ ճառելով, այլ ճշմարտ Կաթողիկէ սկզբունքները բացատրելով և հաստատելով. ընտրութեանց ձեւը, կղերին պարտքն ու իրաւունքը, թեմերու սահմանները, ևն. :

գ. Իսկ բարեկարգական մասը աւելի դրական է. մինչեւ հիմա խառնափանաց կամ անհատներու քմահաճոյից եթեարկուած կարգ ու սարքը կը մարմնաւորի, կը կենդանանայ, պերճապերճ կ'ընձիւղի հաստարմատ : Ծէոյը, Հայկական զեղեցիկ ծէսը, աննման լեզուովը և արարողութիւններովը, առյաւէտ կը նուիրագործուի. ծիսական մատենները ըստ քմաց փոփոխութենէ զերծ կը պահուն և որոշ սահմանի մէջ անհպելի կը դառնան : Սրբութեանց պաշտօնեաներուն վարքը, պարտքերը, իրաւունքները կը բնորոշուին, ժողովրդապետաց պաշտօնը կը նուիրագործուի, կրօնաւորք և Կուսանք իրենց բուն Կաթողիկէ նշանակութիւնը կ'առնուն, ազգօգուտ և նախանձելի : Համօրէն հաւատացեալք նոր լուսոյ մը տակ կ'ընդնշմարտին. Հայ-Կաթողիկէ սրբափայլ, կրօնասէր, անձնազոհ հաւատացեալք, նահատակներու ազնիւ սերունդ, զոր պէտք է խղճամիտ նախանձախնդրութեամբ և գուրգուրանօք յաւերժացնել :

քրիստոնէական բարոյականով, Կաթողիկէ Դատարարականութեամբ և սրբազան Ջերմեռանդութիւններով, որպէս զի ի նորոյ յառնէ ժողովուրդ սեպհական, նախանձաւոր գործոց բարոյքեան: Ի հոսին, զանց չէ առնուած նաև մասնաւորապէս խօսիլ Դատաւարանաց և Պատժոց վրայ, որոնք լաւ կազմակերպուած ընկերութեան մը վարչութեան ծինիներն են:

Այս է, յընդհանուրի խօսելով, Սինոդի իմաստութեան յատակագիծը:

Ահա՛ Օրինագիրքը, ահա՛ ուրեմն փրկութիւնը. փրկութիւնը քմահաճոյքներէն, երբեմն առաջնորդայ՝ երբեմն հպատակաց. փրկութիւնը՝ անպարտաճանաչութիւններէ, յարափոփոխութիւններէ, այլազանութիւններէ, կամայական կամ կամապաշտ սայթաքումներէ, անպատասխանատու և կրքոտ հրամաններէ մէն մի առանձնականի:

Ահա՛ Օրինագիրքը. ահա՛ ուրեմն կարգ կանոն անայլալը, միօրինակ, հոգեշահ և աստուածընկալ. ահա՛ խաղաղութիւն ամէն անոնց որ այսմ կսկնունի միաբան շինիլն:

Ո՛րքան իրաւունքով է որ Վսեմ. Միջնաւոր Կողբի, սպուած Սինոդի մէկ օրինակը զրկած առին, կը դրէր առ Ամեն. Պատրիարքն, ի 4 Ապրիլի, 1914, թուահամար 35093:

Այստա առթիւ կարի հաճելի է ինձ Ձեր Ամեն. Տէրութեան մատուցանել իմ մաղթանքս ու եռանդագին պաշտօնակցութիւնս Աստուծոյ, որ՝ Սրբազան Հօր եւ այս Ս. Ժողովոյս փառաբանուող հասնածայն, Սինոդոսին վճիռներուն հաւատարիմ

գործադրութիւնը փութով արդիւնատու եւ ամենափրկարար պտուղներն բարեաց՝ Պատրիարքեանդ Կարողիկէից հաւար:

Պէտք է ուրեմն որ այս Իրազան մատենը իրապէս և իսկապէս մե՛րը ընենք, մեր հոգւոյն մէջ դրոշմենք զայն, մեր սրտերուն մէջ անջնջելի, զոր Մարգարէն կ'առակէր օրինակաւ կերակուրի (Եզեկ. Գ. 1—3). Որդի՛ մարդոյ, ինչ որ կը գտնես այս մատենին մէջ կե՛ր, կե՛ր մանր այդ մատենը... քացաւ իմ քերական եւ ջամբեց ինձի մատենը... Կերայ զայն, եւ իմ քերական մէջ եղաւ մեղրի փայտութեան պէս:

ՀՕՐ ՄԸ ԶԱՅՆԸ

Ոչ ոք կրնայ ուրանալ թէ վսեմ գեղեցիկութիւն մը ունի այն գաղափարը, որ մեր մէջ կ'արթնցնէ մարդկային եղբայրացութեան փայտութեան մը ճիշդ այն պահուն երբ աշխարհ արիւնքանդ զրգուով մէջ կը գտնուի: Վերակոչում մըն է կեանքի մեկ գաղափարին, որուն մէջ սիրոյ հոգին կարողութիւն ունի վստեղութեան տեսակ անխառնութիւն եւ հարստաւարութիւն. իրօք ընդհանրական խօսք, արժանի այն բարձրութեան որուն կ'իջնէ: Այսպէս կը գրէր ոչ հաւատացեալ թերթ մը Ս. Բահանայապետին անդրանիկ կոնգակին մասին տեսութեան մը մէջ (La Perseveranza 17 Նոյ.):

Ո՛րքան զրաւիչ է ընդհանուր եղբայրակցութեան գաղափարը, ո՛րքան անուշ անոր հրաւիրող ձայնը: Ո՛վ կրնար այդ ձայնը արձաւելի իշխանաբար և իրաւամբ. յայտնի է թէ միայն ընդհանրական հայրութեան կոչուած անձի մը գործ էր այդ և որ իբր խաղաղութեան, իրաւունքի և արդարութեան պատուիրակ՝ վեր ըլլար ամէն վաղանցուկ շտհերէ, երկրագիտակ քաղաքականութեան մը դուռերէ: Այդ Հօր ձայնը պատկառանք լսեց համայն աշխարհ, և սպառնալիս յուզմանց խուլ փոթորկին մէջէն ստեալ խաղա

դուժեան վարդապետը, որ խռոված ծովու վրայէն ինքը միայն անվրդով գնալով կ'ընէր. ես եմ, մի՛ երկնցիք:

Այս ձայնը, առանձին կերպով կրկնեց սիրոյ շնչաւը. որ միայն ներդաշնակութիւն կրնար ձգել խափարաձայն մարտագրգիռ եղբայրատեցութեան միջոցին, և յիշեցուց անգամ մըն ալ սիրոյ պատուիրոսներ, որուն շարունակ պէտքը առանձին կերպով նոր պատիրան ըրած է զայն: Անոր համար երբ աշխարհի մարդասիրութեան ցուցամուլ քարոզներ աւերիչ գոռ որոտումներու փոխուած են, սիրոյ ճշմարիտ վարդապետը, հաւատարիմ Աւետարանի աւանդական սկզբունքներուն նախ առնելու և ապա ուսուցանելու՝ գործի սկսելով անմիջապէս՝ իրեն Քահանայապետութեան նշանաբան կ'ընտրէ Սիրոյ օրէնքը. որով ընդ միշտ որոշած է «աշխատիչ որ Յիսուսի Քրիստոսի սերը վերստին քաղաւորի մարդոց մէջ: Այս գործը սիսի ըլլայ, կ'ըսէ, մեր յարսեւ առաջադրութիւնը իբրեւ յաշխակիչ մեր Քահանայապետութեան»:

* *

Ո՛րքան հեզնիչ է աշխարհ և հակառող ինքնիրեն. բանաստեղծի «Եղբայր եմք մեմք» երգած պահուն, Եսասիրին կուրծքին տակ նախանձը կը միայ. բարեգործութեամբ հարուստը աղքատին ձեռք տալու հրաւիրած ատեն, անձնապաշտութիւնը ցամաք ինքնամփոփումի մէջ կը ծալլէ ձեռքերն. և երբ տնհին համերաշխութեան մը պաղափարոյին միջազգայնացումը՝ երկիրներու հեռաւորութիւնը մօտեցուցած, զաւաններու և աղգային բաժանումներու թումբերը քանդած կը կարծուէր, զիւանադիտութեան հաշիւները դարանամուտ խրամներ փորեցին դեռ երէկի բարեկամներու մէջ: Մարդկային եղբայրակցութիւնը հիմնադրեմ աւելի երբեք փայտուած չի քերելու. նա մասնաւոր չեն տարաբանի հիմա Աւետարանի խօսքը սկսեալով և Քրիստոսի ու Եկեղեցւոյ գործքը մեկիցի դնելով, եղբայրակցութեան այդ գործքը շատագուցեւ այնպէս իբրեւ թէ ներկայ դարու մարդկութեան նորագիւտ պարզեցնելէն մեկն ըլլար: Այսուհանդերձ իրապէս ո՛չ երբեք մարդիկ նուազ եղբայ-

րաւեր գտնուած են, որքան հիմա: Աշխարհի ժպիտը ծաղկի տակ թաքուն օձ մըն է, համայնը՝ մատնիչ:

Ինչէ՞ն աշուէս կ'ըլլայ, ահա ինչ է պատճառը. կը պակսի մարդոց իրարու հետ ապրելու մէջ փոխադարձ քաղցրակամութիւնը, կ'աւանտուրի վերակացուաց իշխանութիւնը. անխառնութեանը կը վերաբերուին իրարու հետ փառաբանաց այնչաւ դաստիարակներ. փառանցուի եւ հոստակաւ քաղցրութիւնը այնքան սնյազաւար կը փնտռուին որպէս թէ չգտնուին կարեւորագոյն քաղցրութիւն, զորս ձեռք քերել հարկ ըլլայ: Այս չոն գիտաւոր շարժառիթները կը կարծենք թէ պատճառ են մարդկային ընկերութեան այսօրու ծանր խռովութեան: Մատը վէրքին վրայ դրուած է. աւելորդ կ'ըլլայ անկէ հեռուն փնտռել ցաւի արմատը բռնկելու համար հարկ է դարձանել մատնանշմուած — ետառէր եղբայրատեցութիւնը, — իշխանութեան դէմ ընդդիմութիւն, անխառնութիւնը զանազան դատաւարդերու իրարու դէմ, — անյաղ աշխարհասիրութիւնը:

* *

Աստուծոյ մոռացութիւնը, անոր նախախնամ, ամենուրեք ներկայութեան ուրացութիւնը բնականաբար եղբայրատեաց կ'ընէ զմարդ և անհամայն: Ի՞նչ կ'ըլլան ծնողքէ հեռի, ուրոյն սպրած հարազատներ, որ երբեք հայր մայր ճանչցած չըլլան. զիրար ալ չեն ճանչնար և զարմանալի չէ որ օր մըն ալ իրարու դէմ ճակատին դիմուած: Ներկայիս եղածն է այս. մարդը զԱստուծոյ մոռցած, անկից օտարացած, իր նմանութեան գծերը չի տեսներ զիմացիին վրայ. զայն չի նկատեր եղբայր, որքան ալ շահագիտական վերաբերումներ մօտեցնեն իրարու այդ անուամբ. և ահա այսօր կոյր հպատակութիւն մը զինած է զինքը եղբոր դէմ: Աստուծոյ փառք չի տրուիր ի քարձուէս՝ չի կրնար հետեւաբար խաղաղութիւն գտնուիլ յերկիր և ի մարդիկ ընկերհաճութիւն:

Իշխանութիւնը մէկ ծայրայեղութենէ միւս ծայրայեղութեան տարուած է այսօր, մէկ անձի չարոյշար ստիպականիւէ մինչեւ անոր ցրումն ու բաշխումն ամէնուն, առաջ

ջինը կռապաշտական է՝ հետեւաբար ամպարիչտ, յեղափոխական է երկրորդը՝ հետեւաբար քանդիչ։ Կռապաշտական է առաջինը, վասն զի մարդը ինքնիրմէ իշխանութիւն չունի։ այլ Աստուծոյ։ Ո՛ր ուսեմ է իշխանութիւն, երբ ոչ յԱստուծոյ եւ որ եմն յԱստուծոյ կարգեալ են (Հոովմ. ԺԳ. 1)։ Միայն Աստուած է բացարձակ Տէր ամէն բանի եւ հետեւաբար իրեն է միայն իշխանութիւն, արքայութիւն եւ զօրութիւն։ Ով որ հետեւաբար ներկայանայ Տէր ինքնիշխան իրրեւ ընդթեմմա եւ ի ծնէ այնպէս եւ ո՛չ ստացած հաղորդակցաբար Աստուծոյ, այդպիսին իր անձը կ'աստուծացնէ։ Ասով ունինք պատմութեան մէջ աստուծային կայսրերու անմատչելի արքայութիւնը, որ հպարտակութիւնը ստրկութիւն, կենակցութիւնը գերութիւն մը ըրած էին։ Այս՝ Աստուծոյ իրաւանց յափշտակութիւն մըն էր եւ կռապաշտութիւն։

Երկրորդը յեղափոխական եւ քանդիչ, վասն զի իշխանութեան միայն անունը կը պահէ, իսկ իրապէս կը ջնջէ. ամենուն կու ապ մէկու մ'ալ տուած չըլլալու համար։ Վեհապետ կը հռչակէ ժողովուրդը՝ զայն կուռակցութեանց գործիք ընելու համար եւ իրմով զինքը կաշկանդելու եւ հարստահարելու համար։ «Այն օրէն, կ'ըսէ Սրբազան Քահանայապետը, երբ հաճոյսկան երեցաւ՝ ամեն մարդկային իշխանութեան ծագուելը՝ ո՛չ Աստուծու, իրաց արարչին ու սիրողին, առաջ բերել, այլ մարդոց ազատ կամքին, պետեալ եւ հպատակներու պատշախտութեանց զօդերն այն ասիւնանի բուսացած են, որ բոլորովին անհետացած կ'երեւին»։ Ինչպէս կ'ուզէք որ իշխող ժողովուրդը հնազանդութեան հոգւով ու համազուժով հպատակի իրմէ կախում ունեցող պետերու։ ուժի առջեւ միայն՝ բուն պիտի համակերպի կուցութեանը ինչպէս անընտել զազաններն զիրենք ցուցադրող վանդակին, սպանելով յարմար առթին ցնցելու զայն, յեղափոխելու, ընդվզելու, ապստամբելու։ «Ասկից կը ծնանի օրինաց արհաւիրանքը, ասկից արքայաներու իրարանցումը, ասկից ամեն հրաման լննադատեալը յաւակնութիւնը, ասկից է որ հազարու-

մեկ պատրուակներ կը գտնուին բարեկարգութիւնը ջրասէլու, ասկից է որ անագին եղեռնագործութիւններ կը կատարեն անոնք. որ զիրենք ամեն օրէնք ազատ դատանով, որիցներու ո՛չ ինչք, ո՛չ ալ կեանք փնայնելու չեն վախնար»։

Ճշմարտութեան մասին եղածը՝ պատահեցաւ իշխանութեան ալ մասին, եւ ինչպէս իւրաքանչիւր անհատի քանաճոյքին ձգուելով ճշմարտութիւնը պարզ կարծիքի, ասորակուսի մը տեղ զրուեցաւ եւ հետեւաբար նա անստուգութեան մշուշին մէջ անօտարեցաւ եւ անոր հետ ցրուեցան մտքերէ։ այսպէս ալ իշխանութիւնը մարդոց ազատ կամքէն բխած նկատելով անսանձ ազատականութեան հետ կամայական, վարկաբարձի եղաւ։ ձեռքէ ձեռք փոխանցելի վրիժառու զէնք մը եղաւ կամ շահագործելի արժեթուղթ մը։ Վասն զի ազատութեան չափազանց տեղը յարստութեան զուգում, ասիւն ամեն կողմ արշաւեց, եւ յիմայեց նոյն իսկ ընտանեկան ընկերութեան, որուն իշխանութիւնը յունեն արեւի ակնյայտի էր քե բնութեան կը ծագի։ Վասն զի ինչ որ մեր սեռին նախահօր պատմութեանց գտնուած պահուն հանդիպեցաւ, նոյնը սովոր է ժողովրդոց պատմիչ։ Ինչպէս անոր մեջ հազիւ քե կամքը Աստուծու հետացած էր, անսանձ ցանկութիւնները մերժեցին կամաց իշխողութիւնը, այսպէս ալ երբ ժողովրդոց շահերու վարչները աստուծային իշխանութիւնը կ'արհաւիրեն, ժողովուրդներն ալ իրենց իշխանութիւնը ծաղրու ծանակ ընելու սովոր են»։ Ասկից յայտնի է թէ «մարդոց իշխանութիւնը հոն կը տապալի, ուսկից կ'օրէնք տարագիր եղած է»։

* *

Միտքը ճշմարտութեան դէմ՝ ապստամբան (libre penseur). կամքը իշխանութեան դէմ՝ անիշխան (anarchiste) հրատարակուելէ վերջ՝ ամբարշտած ինքնապիտակցութեան անուամբ տգէտ կրքոտութիւնը մղեց յառաջ ինքնապիտակցութեան եւ այս է յեղափոխութիւն ըսուածը, որ աւելի քանի բառով վերամշակող կոչուեցաւ, որ ընկերական կենակցութիւնն ալ տակնուվրայ ըրաւ։ Շահագործեց մանա-

ւանդ բնկերային դասակարգերու զանազանութիւնը, զայն ներկայացնելով ամէն թշուառութեանց պատճառ. եւ որովհետեւ ապագայ կենաց հիմնեալ յոյսը, երկնային մնայուն վարձատրութեանց ակնկալութիւնը միայն կրնար անհակառակ թողուլ ինչ որ երկրաւոր կենաց անհարթութիւն կ'ըսուէր և կրնար այսպէս մարել աղքատի նախանձը հարուստին զէմ և նոյն իսկ ատելութիւնը ու վրէժխնդրութիւնը զինաթափ ընել. ուստի վերածնունդը, բացարձակ վերափոխում հիթանոսութեան, որոյ ոչ գոյ յոյս, խլել ուղեց ժողովրդոց սրտէն երկնքի բողբոջներ և յոյսը. և այն ատեն երբ սա գոռաց՝ «Ձրկեցիր երկնքէ՝ երկիրը ատուր», մատնանշեց նա հարուստին ապարանքը, ունեւորին կալուածը, վեհապետի գահը և ժառանգութիւնը, կրօնքի իսկ նուիրական ստացուածքներն. և ահա ժառանգութիւն, զան ու խորան և ասոնց հետ ընտանիք, իշխանութիւն և կրօնք ոտից կոխան եղան:

Ու եթէ կրօնքը չըլլար, չըլլար կրօնքի միակ ամբողջ՝ կաթողիկէ եկեղեցին, որ վստահ իւր անվիրաւորելի անմահութեան վրայ՝ չզրմայրէր ամէն կողմէ ոտքի ելած կատաղի շարժումներուն և զանոնք չահարեկէր այն վիճի անագնութենէն, ուր կ'երթային գահավիժելու, չմարէր անոնց բողբոջներու անկարգ տենչը երկնքի յուսով, աշխարհ աւերակ դարձած էր ամբողջովին. եւ ըսածնուս ապացոյցը՝ շատ զօրեղ գոռալուն՝ կարելի չէ չլսել այսօր, եկեղեցոյ փրկաւէտ ազդարարութենէն, անոր բարերար ընդդիմութենէն խուսափումը միայն, աւետարանական պայմաններէ դուրս խաղաղութիւն հաստատելու ցնորքը, ստեղծեց զինեալ, բռնի խաղաղութիւնը, որմէ հարկաւորապէս այսօրուան աշխարհակործան աղէտը ծնու. Ինչպէս անհասը, նոյնպէս մարդկային ընկերութիւնը առ հասարակ խորշելու է յախճապութենէ, աւելին ունենալու անկարգ ցանկութենէ, վասն զի արեւս արեւնայն չարեաց արծաթափրութիւնն է (Ա. Տիմ. 2. 10): Միայն երկրաւոր ցեղոտ բարիքով երջանիկ ըլլալու և անոր մէջ միայն հանգ-

չելու յուսախաբութենէն տարուելու չէ. «Բանգի ո՛չ եթէ ունիմք քաղաք, որ աստեւն մնայոց իցե, այլ զհանդերձեալսն խնդրեմք» (Եբր. ԺԳ. 13): Վերականգնելու է մէկ խօսքով հաւատքը հանդերձեալ կենաց մասին, որպէս զի խեղճ ժողովուրդը՝ երբ չկարենայ երկիրը ձեռք բերել, չվհասի և յուսահատ շարժումներ չփորձէ, այլ համակերպի աշխատանքի արդար շահերուն և իրաւանց, որոնց գինը իւրաքանչիւրին ճակատին քրտինքն է: «Վասն զի, կ'ըսէ Ս. Բահանուսայիսը, մարդոց մեջ այս հաւասքի անհեղան չափով, պիտի պաղի երկրաւոր քարեաց ունայնութիւնը ձեռք բերելու չափազանց տենչը եւ ասիւր զսրբնչով սերը՝ ընկերական յոգնումներն ու իրարանցումները պիտի շունն»:

Ահա խաղաղութեան պայմաններ, խաղաղութեան զոր աշխարհ չի կրնար տալ, զոր այնքան հոգածութեամբ ու վստահ պարզութեամբ Աւետարանը ստուերագծած է, զոր այսօր Աւետարանի Հեղինակին, յաւիտենական Վարդապետին Փոխանորդը նոյն ոճով կը մեկնաբանէ ու կը քարոզէ: Նոր չէ այս վարդապետութիւնը, վասն զի Աւետարանի ամենատարրական սկզբունքներէն քաղուած է, բայց ներկայ ահեղ պարագաներու մէջ՝ անձկոտ մարդկութեան միակ քաջալերութիւնն է և նորընտիր Բահանուսայիսի մը թերնէն այնքան վայելուչ ճոխութեամբ իջած ըլլալուն համար ակնկառոյց աշխարհի սրտատրոփ տաղնապը կ'անդորրացնէ, ինչպէս հայր մը վտանգի առջեւ սրտաւ դող որդին կը սրտապնդէ: — Հօր մը ձայնն է անիկայ:

ՊԻՈՍԺ. (*)

(Շար.)

Իր եպիսկոպոսութեան ժամանակ հոգեոց փրկութեան համար ցոյց տուած եռանդն ու փոթիլ բացարձակապէս աննկարագրելի են. Իր տուած աւետարանական բարի օրինակներով կրցաւ կարճ ժամանակամիջոցի մը մէջ

Տե՛ս Թիւ 176, էջ 777.

հզօր թուփը մը կանգնել բողոքականութեան առջեւ, որ միշտ աւելի մեծ համեմատութիւններ առնուլ կը սպառնար Մանդովայի մէջ, Հաւատքի մէջ նաւաբեկութիւն ըրած մէկը փնտռելու համար վազելէն բան մը չէր կրնար զինքը ետ կեցնել, մինչեւ որ չարտնէր այն մոլորեալ ոչխարը և Քաջ Հովուի նման զայն ուսին վրայ առնելով չմտցներ փրկութեան փարախը:

Մանդովայի Լիկէնին Ուսուցիչներէն մին մահամերձ վիճակի մը մը մէջ կը գտնուէր. դժբախտաբար այդ թշուառականը ազատամտութեան աղանդին յարած մէկն էր: Անմիջապէս եպիսկոպոսը լուր զրկեց իրեն, առանց բնաւ քաշուելու, թէ կ'ուզէ՞ր արդեօք ընդունիլ իր բարեկամին Սարգոյի այցելութիւնը: Մահամերձը չկրցաւ այսքան սիրալիր բարեկամութիւն մը մերժել: Գիշեր էր՝ երբ ընդունելու պատրաստակամութեան պատասխանը եկաւ. ճամբաները սակայն քիչ ապահով էին: Այսու հանդերձ հոգեոց առաքեալը տան բռնալին զրպանը զրաւ գիշերով և միտ մինակ ելաւ գնաց մոլորեալ հիւանդին քով, զայն հաշտեցնելու համար իր Աստուծոյն հետ: Անոր քով մնաց մէկ ժամէ աւելի. և ապա մատակարարեց անոր նաեւ Վերջին Թոշակը:

Քաղաքական գործեղակերպին մէջ Սարգօ Եպիսկոպոսը, ինչպէս կը զրէր յայնժամու հռչակաւոր հեղինակ մը, Յոյց տուաւ նորր դասողութիւն, հաշտար ոգի, խորաքափանց տեսութիւն՝ մարդիկը նսնցնալու և դասելու մէջ. եւ դժուարակեանի կացութիւններէն զերծանելու համար ճարտար ձեռք: Արեւստական հակակոյերականութեան այն մթնոլորտին մէջ, Սարգօ միշտ զիսցաւ հանրաքանակ կառավարութեան բարի կարգադրութեանց հետ: — Մաւնաւանդ թէ ծայրայեղ կուսակցութեանց ամենաւնդեցիկ հետեւողներն իսկ կարծես ինչ թէ շատ ձեռնառն կ'ըլլային Եպիսկոպոսին ազդեցութիւնը աւելցնելու, առ երկխաղի կամ առ մեծարանաց: Դժուարին բան էր պայքարիչ մեկու մը հետ որ չէր ուզեր պայքարիչ, եւ որ քնական քաղաքականութիւնը՝ որ համեմատու էր մարդոց քաջ նախադրութեանը, զինքնապի

կրնէր առնել ընդդիմութիւն. (Դապլէթ), երբ եկեղեցական մը քաղաքական գործերու վրայ զազաւարներ յայտնէր, ինքը սովոր էր պատասխանել. Անհոգ եղիք. Աստուած կը կարգադրէ:

Ինչ տարուան Եպիսկոպոսութեան ժամանակամիջոցին կատարեց, ի մէջ այլոց, քաղաքականութեան հանդիսաւոր տօնախմբութիւնը քաղաքին պաշտպան Լուգգացի Ս. Անտոնիոսի տօնը, որ մեռած է ի Մանդովա 1086ին և նոյնպէս Ս. Լուիսի Կոնժակայի երեքնարիւրամեակը, որուն մասնակցած էր այդ հիանալի Սուրբը մեծարող ամբողջ Կաթողիկէ աշխարհ:

ՎԵՆԵՏԻԿԻ ՊԱՏՐԻԱՐԺԸ. Յամին 1891 Դեկտեմբեր 31ին վախճանած ըլլալով Կարդինալ Ակոսդինի, Վենետիկի Պատարիարքական աթոռը թափուր մնաց, Լեւոն ԺԳ. Քահանայապետը որ ի ժամանակին քաջ ճանչցած էր իր ապագայ յաջորդը, մտածեց անոր յանձնել ան ստուն վախճանած Պատրիարքին յաջորդութիւնը: 1893 տարուան Յունիս 15ին պարտուպատշաճ ըլլոր ծիսականարութիւններէն յետոյ, Մանդովայի Եպիսկոպոսն Սարգօ Սրբազան Քահանայապետին ձեռքէն կ'ընդունէր Կարդինալական Դիտարկը և կ'անուանուէր Վենետիկի Պատրիարք:

Վենետիկի պատրիարքութիւնը 1451ին ծագում առաւ՝ Ագուլիէայի պատրիարքական իրաւանց հոն փոխադրուելովը:

Իտալական Կառավարութիւնը իրեն վերադրեց Վենետիկեան հին Հասարակապետութեան առանձնաշնորհումները, և պնդեց թէ Աւստրիոյ Կայսեր ըլլոր իրաւանց ինքն է յաջորդ, հետեւաբար և անոր թեւարկութեան և հասարակ պաշտաման կարգելու իրաւանց. և ըստ այսմ կ'ուզէր միջամտութիւն ունենալ Պատրիարքի անուանումին մէջ: Նախարարապետ Բրիսքիին գործին կուգար այս ջատագովականը, զոր կը վարէին յայնժամ կորովի փաստաբաններէն ոմանք: Սակայն Վատիկանու հզօր պաշտպանողականը նոյնպէս ունէր իր գիտնական և ազդեցիկ ջատագովները:

Մինչ այս, կառավարութիւնը կը մերժէր Սարգօ Կարդինալ-Պատրիարքը քաղաքականապէս ճանչնալ, և սալ իրեն Exequaturի (կատարեացի) հրամանը. նոյնպէս կը մերժէր նաև իրեն անձին համար սահմանուած կառավարական նպատակը: Այս ամէնը սակայն բնաւ չկրցաւ Սարգօ Կարդինալը կասեցնել Քրիստոսի Փոխանորդին կոչին հետեւելէն:

1893 տարուան Նոյեմբ. 24ին առաքինազարդ Միրանաւոր Պատրիարքը իր հանդիսաւոր մուտքն ըրաւ իր նոր թեմին մէջ, և ժողովրդեան կողմանէ ամենաջերմ խանդավառութեամբ ընդունուեցաւ:

Ամբողջ քաղաքը շարժման մէջ էր: Տօժերու մայրաքաղաքը, դեղեցիկն Վենետիկ, այն օրը արտակարգ խնդով ու ցնծիւով փայլեցաւ. ահագին իրարանցումով խուժեց ժողովուրդը ընդ առաջ իր ցանկալի նոր հովուին, այդ պատմական քաղաքը կը թնդար զանգակներու գանգիւնով. խաղաղիկ ծովածոցին և բիւր ու մանուածապատ ջրանցքներու ժպտող ալեակները կը վերացողացնէին արուեստի հրաշալիք սննման ապարանքներու գեղերինեան զարդերը՝ զորոնք երախտապարտ որդիք փութաղած էին շտայլելով ցանկի պատիւ և յողջոյն իրենց սիրելի Հօր որ կուգար: Յնծալին աղաղակներով և կեցցէներով ողջունուեցաւ այն նաւակը որ զինքը կը բերէր. այդ անցքը ամբողջ տեւողութեամբը արքայական յաղթանակի մուտք մը եղաւ: Այս փառաւոր սկզբնաւորութիւնը՝ ապա չունեցաւ բնաւ և ոչ մի նուազում, այլ աւելի ամրապնդեցաւ քրիստոնէական պարտաճանաչութեան շնորհիւ:

Կարդինալ Սարգօ աշխատեցաւ չզայրացնելու Իտալական Կառավարութիւնը: Խոհեմ, յամենայնի ուղղամիտ, գիտցաւ խոյս տալ այն ամէն առիթներէ, որոնք կրնային գծուել ինն աւելի ընդարձակել, ըլլա՛յ քաղաքական-եկեղեցական խնդիրներով, ըլլա՛յ յարձակողական դիրք մը առնելով. այսու հանդերձ Քահանայապետական քաղաքականութեան հանդէպ իր բացարձակ յաւուրման ու հպատակութիւնը և ոչ յովտ մի նուազեցաւ: Յիբաւի հակառակութիւնը ա-

ւելի սկզբունքի դէմ էր քան թէ իր դէմ. բայց փոքր ինչ աճապարանք բաւական պիտի ըլլար բուռն կերպով բոցավառելու այդ պայքարը: Եւ ահա այսպէսով եղաւ որ կառավարութիւնը զիջաւ ներողամիտ լռութիւն մը պահելու:

Երբ Ումպէրթօ Ա. 1894 Սպրիլի մէջ Վենետիկ գնաց՝ Գերման Կայսեր այցելութիւնն ընդունելու, Պատրիարքը յարգալիբ փութով հարցուց Վատիկանի թէ ա՛րդեօք ներելի՞ էր իրեն մեծարել Վենետիկը: Հեռն ժ. Լիուլի ազատութիւն թողուց անոր՝ վարուելու ինչպէս որ կը դատէր: Միրանաւորը պատշաճ հանդէսով այցելեց արքային, որ Վենետիկի օրինաւոր Վենետիկն էր. և իր կառավարական հաստատութիւն չունենալէն յառաջ եկած անպատեհութիւնները անոր պարզեց: Վենետիկը լաւ ընդունելութիւն մը ըրաւ իրեն, և հասկցուց թէ Սարգօ persona grata, հաճոյ անձնաւորութիւն մըն էր: Ումպէրթօ սքանչալած մնաց այս Հովուին վարուելակերպէն և երբ Հոռոմ դարձաւ, չէր դադրեր զովարանելէ Պատրիարքին չնաշխարհիկ յատկութիւնները: Կարդինալ Սարգօ անմիջապէս ստացաւ Exequature:

(Շարունակելի)

ՇՆՆԴԵԱՆ ԱՌՓԻԻ ԲԵՆԵԴԻԿՏՈՍ ԺԵ.Ի ԿԱՐԴԻՆԱԼ ՆԵՐՈՒ ՌԻԶԼԱԾ ԲԱՆԱԽՈՍՈՒԹՈՒՆԸ

Հռոմի Սրբազան Քահանայապետները, Մեծն Կարդինալ ատեն ընդհանրացած սովորութեան մը հետեւելով, նոր Տարին, որ Քրիստոսի Թուականով ըլլալուն համար ամ Տեառն կ'ըսուի, Ծննդեան օրը կը տօնեն, եւ նոյն առթիւ շնորհաւորութիւններ կ'ընդունին: Հռոմ գտնուող Կարդինալները խմբովին շնորհաւորութեան կ'երթան Ծննդեան ձրաբալոյցին, եւ իրենց երկցադոյնը ուղերձ մը կը կարդայ որուն կը պատասխանէ Նօ Սրբութիւնը:

Բենեդիկտոս ԺԵ.Ի բանախօսութիւնը այս միջոցին առանձին շահեկանութիւն մը ունի, որովհետեւ այժմ աշխարհը հեւքոտ սպասումի մը մատնող ծանր անցուդարձերուն շրջը կը դառնայ: Ուստի ժամանակէ դուրս չենք նկատեր նոյն

նին հրատարակութիւնը, ընդհակառակն, երջանկայիշատակ Պիոս Ժ. Քահանայապետին պաշտօնի յիշատակը առանձին խանդավաղատանքով դրուատելուն համար, անոր կենսագրութեան քով գետեղելու մասնաւոր պատշաճութիւն մը կը տեսնենք:

Այս բանախօսութեան մէջ ակներեւ կը փայլի Բենեդիկտոս Ժե.ի խոնարհութիւնը, որով եւ վեհանաճնութիւնն ու մեծութիւնը, վասն զի խոնարհը միայն ճշմարտապէս մեծ է եւ Աստուծոյ ձեռքը հոյակապ գործերու միջոց ըլլալու յարմարագոյն: Ուրեմն աշխարհ իւսուամբ կրնայ ակնկալել Բենեդիկտոս Ժե.էն մեծամեծ գործեր եւ ամենէն առաջ խաղաղութեան վերահաստատմը:

Այսօր առաջին անգամ Սուրբ Ժողովը ընդունելու հաճելի առիթը կ'ընծայէ Մեզի մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի Մշակման տօնախմբութիւնը, զոր սովորութիւնը նուիրած է բարեմաղթութիւններու և իղձերու փոխադարձ մատուցման, Յատուկ գոհունակութեամբ տեղեկացանք այժմ վսեմաշուք կարգերէցին խօսքին հաւատարիմ արձագանգն եղող հեղինակաւոր ուղերձէն թէ Ս. Ժողովը Մեզի համար որպիսի՝ զգացումներ կը տածէ և որպիսի՝ բարեմաղթութիւններ կ'ընէ. և այնչափ աւելի կ'ուրախանանք, որչափ աւելի գէպի բարձրերը կը ձգտին այն զգացումները և իղձերը, որոնք թէև Մեր Անձին ուղղուած են, սակայն նորանոր մեծարանքներ են Եկեղեցւոյ աներեւոյթ Գլխին, զոր անարժանաբար կը ներկայացնենք, և կ'ուղղուին, Մեր խոնարհ Անձէն վեր, ընդհանուր Եկեղեցւոյ բարիքին, որմէ աշխարհիս մէջ ու է բան, նոյնիսկ Մեր արիւնը, չի կրնար աւելի սիրելի ըլլալ:

Տարին որ գէպի իր անասարսուռ մայրամուտը կը խոնարհի, Եկեղեցւոյ համար ծանր սուգի պատճառ եղաւ. — Պիոս Ժ. Քահանայապետը, որուն վրայ Մենք, թէ՛ մօտէն և թէ՛ հեռուէն տեսանք ընտիր ընտիր ձիրքերու փառապատիւ և որուն, եղբերական պահու մը, քրիստոնէական ընտանիքէն յափըշտակուիլը անկեղծ կակիծով ողբացինք, այժմ Մեզի երեւան կու գայ, կարկառուն ցոյցերով զորոնք օրըստօրէ առջեւնիս կը դնէ Մեր առաքելական պաշտօնին շարունակութիւնը, ա'յնքան աւելի մեծ որչափ աւելի

յարատեւ եղած էր իր Զանքը՝ իր սքանչելի հոգին զարդարող չքնաղ առաքինութիւնները սքողելու: Արդ այսքան սուրբ Քահանայապետի մը պատկերը և յիշատակը աւելի ևս խորսուկէս կը հաստատեն Մեր յաջորդութեան անարժանութիւնը, Բայց Մեզ կը զօրացնեն կաթողիկէ աշխարհի աղօթքները, որոնց Աստուած, Եկեղեցւոյ օգտին համար, սովոր է մարդասիրութեամբ լսել: Մեզ ոչ նուազ կը քաջալերեն նաև այն որդիական իղձերը և բարեմաղթութիւնները, զորոնք Ս. Ժողովը, իրեւ և ի մխիթարութիւն հասարակաց Հօր, Մեր առջեւը պարզեց:

Այս իղձերուն և ոչ մին Մշակման տօնին սեպհական հանգամանքին ա'յնքան յարմարագոյն, և ոչ մին այժմ ամենուն սրտերը ճնշող պէտքին ա'յնքան համապատասխան կը թուի, որքան խաղաղութեան մասին եղածը: Ուստի այս բարեմաղթութիւնը և այս իղձը կ'ընդունինք մասնաւոր փութոյ պընդութեամբ, մղուած այն ախուր դէպքերէն, որ հինգ ամիսէ ի վեր սուգ հազցուցած են ամբողջ տիեզերքի:

Սրդարեւ Աստուածային Նախախնամութեան հաճոյ չթուեցաւ որ Մեր Քահանայապետութիւնը ուրախալի սկզբնաւորութիւն ունենայ. քրիստոնէական ընտանիքին Նոր Հօր պաշտօնակալութիւնը փոխանակ ցնծութեան ձայներով ողջունուելու ինչպէս ցանկալի էր, շատ երկիրներու մէջ գէնքերու շառաչիւնով և պատերազմի դրդիւնով ողջունուեցաւ: Բայց Մեր Քահանայապետութեան սկիզբներէն ի վեր Մեզմէ չէր կրնար խուսափիլ թէ ո'րչափ բարձր է պաշտօնը Փոխանորդին Անոր՝ որ իր ծննդեամբ խաղաղութեան կարապետ եղաւ՝ մարդկային ազգին: Չէինք կրնար մոռնալ թէ եկած էինք շարունակելու զործը Յիսուսի Քրիստոսի, խաղաղութեան Իշխանին, որ մարգարէութեանց մէջ նկարագրուած է իրրեւ այն, որուն օրով պիտի ծագի արդարութեան արեւը և խաղաղութեան առատութիւնը: Ուստի յիշելով Մեր գերմարդկային առաքելութիւնը թէ՛ հրապարակաւ, թէ՛ առանձնակի ամէն միջոց գործածեցինք որպէս զի

խաղաղութեան խորհուրդը, կամեցողութիւնը և պէտքը լաւ ընդունելութիւն գտնեն։ Դարձեալ այս նպատակաւ մտքերնիս ինկաւ ցայտեցնել այս մահափիւռ պատերազմին աղջամուղջին մէջ, գոնէ մէկ ճառագայթը, միայն մէկ ճառագայթը խաղաղութեան աստուածային արեւուն, և պատերազմիկ աղ-գերուն խորհեցանք առաջարկել ծննդեան զինագուլ մը, կարճատեւ և որոշ զինագուլ մը, փայփայելով ուս յոյսը որ եթէ երբեք չկարենայինք անհետ ընել պատերազմին սև ուրուականը, թոյլ տրուէր մեզի գոնէ սպե-ղանի մը դնել անոր բացած վէրքերուն վրայ։ Ո՛հ, ցանկալի՛ յոյս, զոր ունէինք մխիթարելու այնքան մայրեր և այնքան հարսեր, սա ապահովութեամբ թէ, աստուա-ծային Ծննդեան յիշատակին նուիրուած սա-կաւատեւ ժամերուն մէջ, իրենց սիրելիները թշնամիին կապարներուն տակ պիտի չիյնան, ո՛հ, քաղցր պատրանք, զոր կազմած էինք տալու աշխարհի գոնէ՛ ճաշակ մը այն խա-ղաղ անդորրութենէն զոր այնքան ամիսներէ ի վեր մոռցած է բոլորովին։ — Դժբախտա-բար Մեր քրիստոնէական նախածեռնութիւնը ցանկալի յաջողութեամբ չպսակուեցաւ։ Բայց ասով չվհատեցանք, այլ միտքերնիս զրած ենք ամէն ճիգ թափել անգուգական աղէ-տին վախճանը փութացնելու, կամ գոնէ անոր տխուր հետեւանքները թեթեւցնելու համար։

Հոս կը թուի թէ Աստուածային Հոգին կ'ըսէ Մեզի ինչպէս երբեմն Մարգարէին։ Գոյ՛հ, մի՛ դադարիր։ Գոյ՛հ, մի՛ դադարիր. ուստի մենք զոչեցինք հրապարակաւ և բարի ելքի մը յոյսով, զինուորական ծառայութեան այլեւս անկարող գերիներուն փոխանակու-թեան համար։ Գոյ՛հ, մի՛ դադարիր. ուստի մենք ուղեցինք որ պատերազմական խեղճ գերիներուն քովն երթան անոնց լեզուին տեղեակ քահանաներ և անոնց մատուցանեն այն օգնութիւնները որոնց կրնան կարօտիլ, և միանգամայն յօժարութեամբ յանձն առ-նուն միջնորդ ըլլալ անոնց և անոնց ընտա-նեաց, որոնք թերեւս տեղեկութեանց չգոյու-թեան պատճառաւ անձկութեան եւ մտա-

տանջութեան մասնուած են։ Գոյ՛հ, մի՛ դադարիր. ուստի կը գովենք, եւ կը քաջա-լերենք այն սրբազան հովիւները եւ այն առանձնականները որ որոշած են ծաւալել կամ բազմացնել հրապարակական և առանձ-նական աղօթքները, որպէս զի Յիսուսի ամենասուրբ սիրտը քաղցրութեամբ բռնա-դատեն և անկէ ընդունին որ վերջ՝ գոնէ այս սոսկալի պատուհասը որ այժմ աշխարհի մեծ մէկ մասը կը ճնշէ և կը խռովէ։

Օ՛հ, թո՛ղ գետին իյնան եղբայրասպան զէնքերը. թո՛ղ իյնան վերջապէս այն զէն-քերը որ արդէն չափէն աւելի արիւնով շա-ղախուած են... և զանոնք կրելու պարտա-ւորուած ձեռքերը թո՛ղ դառնան ճարտարա-ուեստի և առեւտրի աշխատութեանց. թո՛ղ դառնան քաղաքականութեան և խա-ղաղութեան գործերու։ Օ՛հ, թո՛ղ լսեն, գո-նէ այսօր, պետեր եւ ժողովուրդներ հրեշ-տակային ձայնը որ կ'աւետէ նորածին թա-պաւորին գերմարդկային պարգեւը, «նաղա-ղութեան պարգեւը», եւ իրենք ալ արդարու-թեան հաւատքի և հեզութեան գործերով թո՛ղ ցոյց տան այն «բարի կամքը», (հաճու-թիւնը), զոր Աստուած նոյն խաղաղութիւնը վայելելու պայման դրած է։

Մենք հաստատապէս կը հաւատանք, Ծիրանաւոր Տեարք, թէ այս բարեմաղթու-թիւնը, որով ամենէն աւելի ուրախ ենք համապատասխանելու մեզի որոտայտուած զգացումներուն, Աստուծոյ պթութեան հա-ճելի պիտի ըլլայ. չենք ուզեր սակայն անց-նիլ առանց յորդորելու այն ամէնքը որ այս հանդիսաւոր ժամոյն սիրուն պսակ մը կը կազմեն Մեր շուրջը, որպէս զի յարատեւ աղօթքով թախանձագին պաղոտին բարձ-րեալին՝ մեր բարեմաղթութեան իրազորման համար։

Կը յարենք նաեւ ուրիշ ջերմագին բարե-մաղթութիւն մը, եւ այս Զեզի համար է Վսեմաշո՛ւք Կարգերէց, եւ Սուրբ Ժողովին բոլոր անդամներուն համար, որոնք իրենց ցանկալի ներկայութեամբ Մեզի կը ներկա-յացնեն այժմ պատկերը Կաթողիկէ տիեզե-րածաւալ ընտանիքին. որ իր Դիւին շուրջը

խմբուած է թէ՛ ուրախ եւ թէ տխուր օրերու մէջ :

Ուրեմն Ձեզի եւ Միրանաւոր Տեարց , որոնք կը մասնակցին մեր վարչութեան որ այնքան անձկութիւններ եւ այնքան հոգ եւ ջանք կը պահանջէ , կը մաղթենք երջանիկ կեանք եւ արդիւնաւոր գործունէութիւն : Տան Երկինք որ հոգածութիւնը , ըմբռնումը եւ յաջողութիւնը այն նախախնամական օժանդակութեան որով Դուք եւ Ձեր ընկերները պիտի շարունակէք նպաստամատոյց ըլլալ Մեր Բահանայապետութեան , օր առաջ մարդկային ընտանիքը , սիրայիլ համաձայնութեամբ եւ երանաւէտ անդորրութեամբ , հանգէտ ընեն այն խորհրդաւոր հօտին որուն ակնարկեց Քրիստոս երբ Պետրոսի եւ Մեզի յանձնեց անոր պահպանութիւնը :

Այսքան շնորհներու առհաւատչեայ եւ գլուխակաւ ըլլայ առաքելական օրհնութիւնը , զոր Ձեզի եւ ներկայ Միրանաւորներուն ինչպէս նաեւ Եպիսկոպոսներուն , Աւագերէցներուն եւ ամէն եկեղեցականներուն եւ աշխարհականներուն որ այժմ մեր շուրջը կը գտնուին , կը հաղորդենք սրտի զեղումով :

ԱՐՇԻ. ՏԵՂԱՊԱՆԸ

Թե Արհի Տեղապահ Արեւայք իր վիճակին մէջ որպիսի համակրութիւն եւ սէր կը վայելէ կ'ապացուցուի մեզ ի հրաշարակութիւն որկուած հեծեւեայ երկու գրութիւններէն՝ որոնց մին ձօնուած է իրեն յեպի Պոլիս մեկնումին , իսկ միւրը անուան թմախմբութեան ստորի :

Ա.

Արհի . Գերապայծառ Տէր ,

Նախախնամական կարգադրութիւն մը , արտայայտուած մեծաւորաց ձայնով , կը կոչէ զՁեզ Վոսփորի ափունքը՝ Տեղապահի պաշտօնով : Եւ դուք կը հպատակիք այդ կարգադրութեան . կը թողուք ձեր սիրելի ասպարէզը , երջանիկ թատերաբեմ՝ Ձեր բարձր լուսասփիւռ ձիրքերուն , ուր ի հանգէս ընծայեցիք վարչական , անտեսական հիանալի

տաղանդ մը , կորովի նկարագիր մը , արդիւնալից գործունէութիւն մը , որոնց շնորհիւ նախանձեղի ըրիք զայն աղգաց : Ի մէջ այլոյ ընդ երկար պիտի ցոյան այն ջանքերը զորս վռտեցիք թօթափելու տգիտութեան խաւարը՝ ժողովրդեան ամէն խաւերուն մէջէն , եւ որոնցմէ կը լուսաւորուին Բերիոյ դրեթէ ամբողջ պատանակութիւնը : Մեծ եւ փոքր , տկարն ու փարթամը գտան ի Ձեզ իմաստուն Առաջնորդ մը , ճշմարիտ հովիւ մը , գթաբարտ Հայր մը . Ձեր պաշտօնակիցներուն ներկայացուցիք հետեւելիք ուղի մը ¹ , Եկեղեցւոյ ծէսերու նախանձախնդիր պահապան , զարկ տուիք եկեղեցական հանդիսութեանց եւ խղճմտօրէն հետեւեցաք մեր Հայրապետաց գծած ուղիին : Երկպառակութեանց որոմը այրեցիք քրիստոնէական սիրոյ հնոցին մէջ . խաղաղութեան համերաշխութեան մթնոլորտ մը ստեղծեցիք որուն մէջ երբեմնի առիծներ գառնուկ դարձան հեղահամբոյր Հովուից քղանքին շուրջը : Անկեալը վերականգնեցիք . լաւը՝ լաւագոյն ըրիք :

Այս Ձեր կեանքի կայլափներով կերտուած անդորրաւէտ ասպարէզէն կը մեկնիք հիմա տանելու խաղաղութեան աւետիսը հոն ուր մերկայոյց հովեր կ'արշաւեն եւ կը դղրդեն ամբողջ ազգ մը : Մեկնեցէ՛ք . Արհի . Գերապայծառ Տէր , վստահ այն զէնքերուն զորս ամէն օր կը միւէք աւետարանական զպրօցին կենսաւէտ վարդապետութեան ողիին մէջ . անվրէպ է անոնց հարուածը : Ձեր լայն , հատկցող միտքը , Ձեր համբերատար գուրգուրանքը պիտի լուծէ ամէն կնճիւռ եւ մահաբոյր հովերէ ցրուած զաւակներ պիտի տանիք իրենց օրինաւոր Հօր պիւրը ի համբոյր խաղաղութեան : Մեկնեցէ՛ք , Գերապայծառ Տէր , բազո՛ւկ եղէք Հայ-Վաթնոյիկէ Հասարակութեան Հովուապետին որ յաջողի ապահովել յարատեւ բարօրութեան ոսկեղէն դարը , զոր իր եպիսկոպոսակիցներովը կը բաղձայ իր հասարակութեան համար :

¹ Բաղաքիո կաթողիկէ եպիսկոպոս մը ընկերութեան մը մէջ ըսած է . « Ես քայլ առ քայլ Հայոց սպառնալից օրինակին պիտի հետեւեմ » :

Իսկ մենք ի՞նչ պիտի ընենք հոս . կը հպատակինք մենք ալ նախախնամական կարգադրութեան , զգալով մեր զրկանքին մեծութիւնը , զգալով որ բաժանման դաւը ուժգին կը ճնշէ մեր սրտերը : Մեր միտքը թիւնը պիտի ըլլայ պահել Ձեր իմաստուն կենսաւէտ խորհուրդները , պարծանօք զմայլել առաքինութեան վսեմ ցոյքին որ յաւէտ պիտի ճաճանչէ մեր հորիզոնին վրայ , և մեզ ուղեցոյց և խթան պիտի ըլլայ ընթանալու դէպի բարին : Պիտի պահենք նաև Ձեր բարիքներուն յիշատակը , որոնք բազմաթիւ են , անմոռանալի են : Ձեր ձեռնարկող անվհատ նկարագրին բարձրագոյն ապացոյց մը տուիք վերջերս . հուժկու յաղուկով խորտակեցիք հինաւուրց անյարմար բնակարանը և անոր տեղ կանգնեցիք փառապանծ շէնք մը , լուսազեղ սենեակներով , հոյակապ սրահներով . որով մեր կրթական գործին մղում և հաստատութիւն աուիք : Մեծ մարդիկներու յատուկ զիջողութեամբ զբաղեցաք անոր ամէն մանրամասնութիւններով , կանխատես հօր մը նախազգաց հաշիւներով փութացուցիք զայն . այնպէս որ երբ տիեզերական պայքարը որոտաց իր արեւելիքները , իր կասեցուցիչ հովերը , հիւսնի վերջին հարուածները կը թնդային հոս :

Դուք ալ , Արհի . Գերապայծառ Տէր , տարէ՛ք հետերնիդ մեր շնորհակալութեան , մեր երախտագիտութեան իղձերը , տարէ՛ք հետերնիդ մեր օրհնէնքներուն խորձը Ձեր քաղած զաւիններուն հետ . այս օրհնէնքները որ իրական են , ընդհանուր են , արդար արիտուր և գնահատում Ձեր անձնանուիրութեան . յառաջընթաց թող թռչին անոնք քանդելու ճանապարհին խոչընդոտները , մինչեւ նաւահանգիստ , զուարթ ուղեւորութիւն մը պատրաստելու Ձեզ :

Փութով աւարտի Ձեր առաքելութիւնը , որ վերադառնաք Բերիա , գործադրելու ծրագիրներ ևս որոնց համար յարմար ժամուն կը սպասէիք զՁեզ յատկանշող երկայնմոութեամբ : Գերապայծառ Տէր , այս ակնկալութեամբ քաջալիրուած կ'արտասանենք մեր երթաք բարեաւր :

Ք. Ե.

Բերիա, 6 Դեկտ. 1914

Ք.

Ձօն ի ռօնի տնուան

ԱՌ ԱՐԶԻ. ԳԵՐՊ. Տ. Տ. ՕԳՈՍՏԻՆՈՍ ԱՐՔԵՊ. ՍԱՅԵՂԵԱՆ
Վիճակաւոր Բերիոյ

Հայրապետ դու , հեղափոխութեան խոնարհ , Որ իբրեւ ճանաչելի մ'հսկայ անձիւր Արեւուն , Կը կատարես ընթացքդ յուռ , վեհափառ , Արձակելով լոյսեղ խորձեր շողոքողուն : Այդ խորձերուն մէջ պարուրես յուսեղին , Երամ մանկանց հարուստ , աղիւս կամ անցեր , Զորոնք սանիս սուրբ հաւաստի ուղիքն Դիպի բարւոյն եւ ճամարին բեւեռներ : Այդ ցոյքներուն մէջ կ'ընդգրկես կաթոգին Հօս . մը համակ բազուկներով հայրագուր , Աջովդ բաշխես արտի գանձեր քու անգին , Միւսով քանդես անոր ճամբուն խոչն ու խուր : Ներսեսեանց պես հոգիդ դիպ հոն սաւառնի , Ուր հաւասոյ Բրիստոս Կեփայն վեմ դրաւ , Երբ կատարես պաշտօնդ սուրբ սեղանի Անոնց խանդով , անոնց երգով ու լեզուաւ : Թո՛ղ այդ հաւաստի հոսանք հոսանք ծաւալի Երբեք մէջ եւ մեր վրայ ընդհանուր , Կոելով կեանքիդ շղթային քու անձկալի Նոր փառքերու , յաղթանակի բիւր անուր : Ես պիտի մեծ կոչեմ ըզ՛բեզ եւ գիտեմ Ամբողջ Բերիա կը ձայնակցի արտաբուրդ , Ապագային ալ շեշտեմ իր վսեմ Պիտի կրկնէ կաթոլիկէ մեր սերունդ :

Ք. Ե.

Բերիա, 28 Օգոստ. 1914

ՔԱՅ ՆԱՄԱԿ

ԱՌ ԱՐՇԱԿ Ա. ԱՆՊՈՅԱՃԵԱՆ ԷՃԵՆՏԻ

Ձեր բանասիրական յօդուածները հաճոյքով կարդացող ընթերցողի մը կը ներէք անշուշտ որ ձեզ հետեւեալ հարցումը ուղղէ : Ինչո՞ւ համար , ամէն անգամ որ տոբիթը ունենալու Լիւնայոյց վրայ դրեալ , անպատճառ Նիկիոյ Թորոսովիչ և Վարդան Յունանեան «սեւ անուն» ունին կ'ըսէք : Արդեօք այս երկու եպիսկոպոսներուն կաթողիկէ ըլլալը յանցանք կը նկատէք և ձգտաք կա-

թողիկէ մը լաւ Հայ մը չի կրնար ըլլալ կը զաւանիք:

Մեր դիտածը այն է որ այնպիսի ժամանակ մը ուր Եւրոպայի մէջ Հայուն ինչ ըլլալը գրեթէ ո՛չ մէկուն ծանօթ էր, վերոյիշեալ երկու Եպիսկոպոսները զայն ճանչցուցին Լեհաստանի մէջ և յարգել տուին. նոյնիսկ յաջողեցան Հայ գաղութին համար կարեւոր առանձնաշնորհումներ ձեռք ձգել:

Հետեւաբար չենք հասկնար թէ ինչո՞ւ լսելու անուան ձգեր են եղեր:

Կը հաճի՞ք զայս բացատրել անաշուօրէն:

ՊԱՍԿ ԴՊԻՐ

Քաղկեդոն, 5 Յնւր. 1915 (Ն. Տ.)

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ (¹)

ՀՌՈՄ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ. — Սրբազան Քահանայապետը, Յունուար 22ին գումարուած Կարդինալաց Ժողովին մէջ, պատեւրագովն շարունակուելուն համար մեծ ցաւ յայտնելով յորդորեց զամէնքը որ աղօթեն աշխարհի խաղաղութեան համար:

— Լեհաստանի կաթօսեալներուն՝ 10,000 Քրանք նուիրեց Ն. Սրբութիւնը. իսկ Կարդինալաց Ժողովը նուիրեց 3000 Քրանք:

— Ս. Քահանայապետը Աստուծոյ խաղաղութիւն հայցելու համար յատուկ աղօթք մը յօրինեց և եօթը լեզուով տպել տալով ամէն կողմ ծաւալել հրամայեց:

— Ս. Քահանայապետը հրամայեց որ Փետր. 7ին՝ Եւրոպայի, և Մարտ 21ին՝ միւս երկիրներու բոլոր եկեղեցիներուն մէջ յատուկ աղօթքներ ըլլան խաղաղութեան համար:

* * Հռոմէն կը ծանուցուի թէ ամերիկացի Գիպպընս, Ֆարլի եւ Օ' Բօնէլ կարգինալները առաջարկեցին Մր. Ուիլսոնի որ Մ. Նահանգները Վատիկանի գործակցին խաղաղութեան վերահաստատման նպատակով եւ պատերազմին հետեւանքները մեղմացնելու համար: Մր. Ուիլսոն նպատաւոր

(¹) Գալ թիւով պիտի սկսինք, առաջուան պէս ընդարձակօրէն հրատարակել մեր տեղեկագրական բաժինը, զոր ինչ ինչ պատճառներով կրճատելու ստիպուեցանք ժամանակ մը:

ընդունելութիւն ըրաւ ամերիկացի կարգինալներուն այս առաջարկին եւ հաւանաբար արտասովոր պատուիրակ մը պիտի զրկէ Հռոմ Ս. Պապը շնորհաւորելու համար իր գահակալութեան առթիւ եւ խորհրդակցելու համար թէ ինչ միջոցներ ձեռք առնելու է մտքերը հանդարտեցնելու եւ եւրոպական պատերազմը շուտով վերջացնելու համար:

* * Տեղեկ թակեալ Չայքունկ կ'իմանայ Քրէնհակէն թէ Ճաքսոն մտադիր է դիւանագիտական ներկայացուցիչ մը ղրկել Վատիկանի մօտ:

* * Սերպիոյ Բեթար թագաւորը հրամայագիր մը ստորագրեց, որով Մ. Կապրիլօ-վիչ գեապան կը կարգուի Վատիկանի մօտ:

* * Վատիկանի չըջանականներուն մէջ կ'ըսուի թէ մօտեցաւ Վատիկանի մօտ օսմ. դեսպանութիւն մը պիտի հաստատուի:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԽԱՐԱՆ. — Էջմիածնական լրագիրներն սկսած են նորէն մեր գործոց վրայ այլընդայլոյ լուրեր տալ և չարաչէս խորհրդածութիւններ ընել: Մեր Հասարակութիւնը կը յորդորենք անգամ մըն ալ զգուշանալ այդ կարգի տեղեկութիւններէ և անոնց կարեւորութիւն չտալ:

Վստահ ըլլայ նա որ եկեղ. իշխանութիւնը հաշտարար դիրքի մէջ յարաուեւելով պիտի շարունակէ սիրաշահական ամէն միջոցներ գործածելու առանց երբեք խախտելու և վտանգելու սկզբունքները, որոնք խաբիսն են մեր եկեղեցական և հասարակական կացութեան:

Նոյն ոգւով ներշնչուած են Արհի. Տեղապահ Արքեպիսկոպոսին առաջարկները և ուղղութիւնը, որոնք են.

1. Մինչեւ որ գործադրելի կանոնադրի մը պատրաստութեան համար վերջնական համաձայնութիւն գոյանայ և ըստ այնմ ունենանք ժողովներ կազմելու որոշ ձեւ մը, պահել ինչ որ արդէն որոշ է և ընդունուած:

2. Ընդունուած են և պիտի պահուին Աւագանւոյ եւ վարչական ժողովները. որոնցմէ առաջինը կ'ընտրէ երկրորդը, իսկ առաջինոյն ընտրութեան պայմանները անորոշ են

և որոշելի կը մնան ապագայ կանոնադրին հետ :

3. Բայց որովհետեւ այսօր կազմուած չեն այդ ժողովները և չունին օրինաւորութիւն՝ այդ անունը կրող միակողմանի ու անպիտան ժողովները, ուստի հարկ է գտնել ձեւ մը վերակազմելու այդ ժողովները :

4. Այդ ձեւը չէր կրնար ըլլալ վերահաստատութիւն տեղապահի կողմէ՝ յիշեալ ապօրինի ժողովներուն, ինչպէս ոմանք կը պահանջէին, այլ՝ կա՛մ պէտք է առժամաբար նոր վարչական մը կազմել նոյն ինքն Տեղապահի ձեռքը՝ ապագային թողլով Աւագանւոյ ժողովոյն ընտրութիւնը, եւ կա՛մ այն պատահական եւ արտակարգ ժողովը՝ զոր, անկանոն վիճակիւն քերամք եւ պարագայից ստիպմամբ, Կառավարութիւնը Տեղապահի ընտրական գործին եւ միանգամուան համար միայն ունենաւ էր, այդ ժողովը՝ կ'ըսենք, Վարչականի ընտրութեան համար նոյնպէս այս մէկ անգամ ալ իրիւ ընտրողարան մարմին բացառաբար ընդունիլ, յարգելով դարձեալ ինչ ինչ սկզբունքներ :

5. Յամենայն դէպս այդ ժողովոց երբեք չթոյլատրել խորհրդարանի ձեւ ու ընթացք, ինչպէս ուզուած էր մուծել հակառակ նախկին ուղղութեանց :

6. Կանոնական ամէն անյարմարութեան առջեւն անուշ եւ պահել Եկեղ. իշխանութեան անձեռնմխելի իրաւունքներն, թողլով այդ ժողովոց սոսկ քաղաքական գործերու խորհրդակցութիւն :

Տեղապահը այսպէս խորհելու եւ գործելու մէջ իրաւունք ունի, քանի որ կառավարութեան ընդունած սկզբանց եւ իրմէ Եկեղեցական իշխանութեան արուած երաշխաւորութեանց համաձայն է այս :

Կը մնայ որ նոյնպիսի բարի տրամադրութիւն ցուցնեն Եկեղ. իշխանութեան հանդէպ անունք՝ որ անկից հեռացած ըլլալով, կ'ուզեն այսօր մօտենալ Տեղապահ Արքեպ. ի շուրջ աղգային գործոց մասնակցելու :

* * * Յուն. 18ին, Ս. Անտօն Անապատա-

կանին տօնին օրը, Աթոռանիստ Ս. Ա. Եկեղեցւոյն մէջ պատարագ և հանգստեան պաշտօն տեղի ունեցան, բարեխիշատակ Հատուկան Անտօն Կարգինալին հոգւոյն համար, ի ներկայութեան Ամեն. Գերերջանիկ Հոգեւոր Տիրոջ, և Արհի. Արհի. Յովսէփ Արք. Ռոքոսանի, Օգոստինոս Արք. Սայեղեանի, Մատթէոս Եպ. Սիւրիանի, Յովհաննէս Եպ. Նազրեանի, և բազմաթիւ Գեր. Վարդապետներու :

* * * Յունուար 23ին Արհի. Տեղապահ Գերապայծառ ընկերակցութեամբ Օսմ. երեսփոխան Վսեմաշուք Յակօբ էֆ. Ուլագեանի սյցելից Արքարութեան նախարար Վսեմ. Իպրահիմ պէյին, և սիրալիր ընդունելութիւն գտաւ : Ապա սյցելութեան գնաց Ներքին գործոց նախարար Թալէաթ պէյի, բայց չկրցաւ տեսնուիլ Ն. Վ. Տէրութեան հետ, որովհետեւ բացակայ էր. ուստի իր այցեւորմամբ ձգելով ետ դարձաւ :

* * * Սեբաստիոյ Արհիպատիւ Վիճակաւոր Լեւոն Արք. Բէշէճեան, Սեբաստիոյ մէջ Սուրբ Վլաս անունով վարժարան մը բացած է և կրթական Տեսչութեան կողմէ պաշտօնապէս հաստատել տուած է : Վարժարանը յաճախող աշակերտներուն թիւը 300ի կը հասնի առ այժմ : Յարաճուն յաջողութիւն կը մաղթենք Արհի. Վիճակաւորին այս կարեւոր ձեռնարկին :

* * * Յունուար 3ին Պանտրմայի Գեր. ժողովրդապետը Մկրտիչ վրդ. Մուրատեան, Եկեղեցւոյ մէջ յատուկ հրապարակական ազօթքներ ըրած է խաղաղութեան և օսմ. բանակին յաղթութեան համար : Այս առթիւ զամբիւններով և օսմ. դրօշներով զարդարուած են Առաջնորդարանին և Եկեղեցւոյ դռները : Մանաւոր հրաւէրով ներկայ գտնուած են տեղւոյն Կուսակալը, Դատաւորը, Միւլթիին, և բազմաթիւ գիւղերական պետեր իրենց հետեւորդներով : Ազօթքէն յետոյ Ամէնքն ալ Առաջնորդարանի ընդունելութեան սրահը ելլելով պատշաճ կերպով մեծարուած են և իրենց շնորհակալութիւն յայտնած են :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դէպքեր եւ սկզբունքներ	17	Ճերու աղղած բանախօսութիւնը	26
Հօր մը ձայնը	21	Արհի. Տեղապահը	29
Պրոս Ժ.	24	Բաց Գամակ	30
Ծննդեան առթիւ Բենեդիկտոս ԺԵ.ի Կարգինալ-		Տեղեկագրական	31

ԱՐՏՈՒՆՏԵՐ

ՅՈՎԼ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ

ՏՆՕՐԵՆ-ԽՄԱՅՐԱՊԷՏ

ԳԵՈՐԳ Ծ. Վ. ԹԵՐԶԻՄԱՆԵԱՆ

Տպարան Կ. Արժագանից Նարաթաբարի, Բերա, Պայրաճ փողոց քրէ Ծ, Կ. Պոլիս

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ — Թուրքիոյ համար տա-
րեկան՝ 40 դհկ. արծ. վեցամսեայ՝ 20. — մէկ թիւ՝ 1 դհկ. — Արսասահ-
ման տար. Ֆր. 10. վեցամս. 5. — Վճարմունք կանխիկ են.

ՀԱՍՑԷ. — Կարողիկէ Արձագանգ, Բերա, 5. Պայրաւ փողոց 5, 4.

Պոյխ:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ. — 1. — Արձագանգ կը հրատարակուի
Շաբաթ օրերը: 2. — Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ ան-
պատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ու ե
յօդուած: 3. — Կեղծանունով զրկուած յօդուածներու հեղինակը
կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրապետին:
4. — Ձեռագիրները ետ չեն դարձուիր: 5. — Յօդուածներու
ձեռագիրները պէտք է զրուած ըլլան թուղթին մէկ կողմը մի-
այն: 6. — Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք
կը կատարուին: 7. — Հասցէի փոփոխութեան համար պէտք է
անհրաժեշտ երկու դահեկանի նամակադրոշմ ի միասին զրկել:

Տարր. Սկզբունք Քրիստ. Վարդապետութեան. գին 2 դհկն.:

Տէր Կոմիտաս Քահանային վարքը. գին 5 դհկն.:

Եսթեր՝ ողբերգութիւն Ռասինի: Գին 3 դահեկան:

ՏՊԱՐՍՆ Կարողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստ ամենայ-
նի ճախ և ի վիճակի է՝ որ և իցէ ապագրական դործոց համար: Այլ ապուին ամեն տե-
տակ ծանուցմունք, գիրքեր, տեսքներ, հրաւիրագիրներ, քարդեր, քարդ-ատրէսներ,
մահազգներ, եւն. եւն. Գինները անմեղքի կերպով աման են: Գեղեցկագիտական ճա-
շտկի և ապագրական մաքրութեան կողմէ յաճախողները անտարաւոյս գոհ պիտի
ընան:

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Capital entièrement versé 150.000.000 de couronnes

Réserves: 49.000.000

SIÈGE CENTRAL:
VIENNE I. Schottenring

SUCCURSALES:

EN AUTRICHE-HONGRIE: *Agram, Aussig, Bielitz-Biala, Bozen, Bruenn, Budapest, Budweis, Czernowitz, Drohobycz, Friedek-Mistek, Graz, Innsbruck, Jaegerndorf, Karlsbad, Klagenfurt, Krakau, Lemberg, Marienbad, Meran, Oest, Nowosielitz, Pardubitz, Pilsen, Prag, Prossnitz, Przemyśl, Salzburg, St. Poelten, Stanislaw, Tarnopol, Tarnow, Teplitz, Teschen, Villach, Wr. Neustadt, Zwittau.*

EN TURQUIE: *Constantinople et Smyrne.*

SUCCURSALE DE CONSTANTINOPLE

Siège à Galata, Place du Pont de Karakeuy
Agences à Stamboul, Péra et Scutari.

Le Wiener Bank-Werein fait toutes opérations de Banque et notamment:

Avances en Compte-Courant contre dépôt des titres, effets de commerce ou marchandises;
Escompte d'effets de commerce;
Achat et vente de change sur l'Etranger;
Emission de lettres de crédit et ouverture d'accreditifs simples et documentaires;
Paievements télégraphiques en Turquie et à l'Etranger;
Encaissement d'effets, de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages;
Exécution d'ordres de Bourse sur place et à l'Etranger;
Ouverture de Comptes-Chèques et de comptes-dépôts à intérêt;
Garde de titres, marchandises etc.
Achat de vente de monnaies diverses, matières précieuses, monnaies d'ornements;

Caisse d'Epargne à 3. $\frac{1}{2}$ % d'intérêt.

Location de coffre-fort (à Galata et à Stamboul).

UN BUREAU DE VOYAGE (Représentant des Chemins de fer de l'Etat Autrichien) est attaché à l'Agence de Péra et délivre des billets pour tout l'Univers. Les voyageurs y trouveront toutes facilités possibles et tous renseignements désirés.